DOI: 10.59560/18291155-2025.3-184

ՀՐԱՅՐ ԱՂԱՎԵԼՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի
իրավունքի ինստիտուտի
իրավագիտության ֆակուլտետի
չորրորդ կուրսի ուսանող

Գիտական ղեկավար՝
ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Ռուս-հայկական համալսարանի
իրավունքի ինստիտուտի
Քրեական իրավունքի և քրեական
դատավարության իրավունքի
ամբիոնի դասախոս, իրավաբանական
գիտությունների թեկնածու

ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Ամփոփագիր

Մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ժամանակակից ստրկության դրսևորում. այն ենթադրում է խոցելի անձանց շահագործում: Թեև պատմականորեն ստրկությունն ընդունվում էր որպես բացահայտ իրավական կարգավիճակ, այսօր այն արտահայտվում է հարկադիր աշխատանքի, սեռական շահագործման և ստրկության այլևայլ ձևերով:

Թրաֆիքինգի դրդապատճառները բազմազան են. մի դեպքում դրանց հիմքում ընկած է սոցիալ-տնտեսական անապահովությունը, մյուս դեպքում՝ իրավական համակարգերի թուլությունն ու միջազգային հանցավոր ցանցերի գործունեությունը և այլն: Այս երևույթի դեմ պայքարը պահանջում է համալիր մոտեցում՝ ներառելով կանխարգելիչ միջոցառումներ, օրենսդրական բարեփոխումներ և իրավապահ մարմինների համագործակցություն:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել թրաֆիքինգի զոհերի քրեաբանական բնութագրի ուսումնասիրությանը՝ ընդգծելով նրանց սոցիալական,

տարիքային, սեռային և հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև հանցագործների կողմից նրանց ընտրության մեխանիզմները:

Հիմնաբառեր. մարդկանց թրաֆիքինգ, ժամանակակից ստրկություն, հարկադիր աշխատանք, սեռական շահագործում, զոհերի պրոֆիլավորում, հանցավոր ցանցեր, հակաթրաֆիքինգային օրենսդրություն:

Հիմնական վերլուծություն

Մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը հաճախ նկարագրվում է որպես ստրկության ժամանակակից ձև: Ստրկությունը մարդկության պատմության մեջ շահագործման ամենադաժան ձևերից մեկն է: Թվում է, թե մարդկանց առևանգման, աճուրդային վաճառքի և նրանց շահագործման դեպքերը ստրկության հնագույն դրսևորումներ են և ժամանակակից աշխարհում հազվադեպ են հանդիպում, այնուամենայնիվ, այդ արատավոր երևույթը դեռևս «կենսունակ» է և գտնվում է գիտնականների ուշադրության կենտրոնում. վերջիններիս կողմից տարվում են տարատեսակ համեմատական զուգահեռներ մարդկանց թրաֆիքինգի ավանդական և ժամանակակից ձևերի միջև: Ժամանակակից թրաֆիքինգը նույնպես հիմնված է խոցելի և հուսահատ մարդկանց նկատմամբ գերիշխանության վրա՝ նրանց շահագործման տարբեր ձևերի դրսևորմամբ:

Այս տեսանկյունից, մարդկանց թրաֆիքինգը՝ որպես ժամանակակից ստրկության ձև, բնորոշվում է ոչ թե մեկ անձի օրինական սեփականության, այլ ժամանակավոր վերահսկողության, պարտքի դիմաց ստրկության՝ ճորտային կախվածության, հարկադիր աշխատանքի կամ համաշխարհային տնտեսության պայմաններում գերշահագործման պայմանագրային գործարքների միջոցով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածը սահմանում է «մարդու թրաֆիքինգ կամ շահագործում» հասկացության բացատրությունը՝ այն բնորոշելով որպես *շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի*

խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով»[1]:

Անձանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու, զսպելու և պատժելու մասին արձանագրությունն ընդունվել է 2000 թվականին՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից, Իտալիայի Պալերմո քաղաքում: Այն ՄԱԿ-ի՝ «Անդրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ» կոնվենցիայի մաս կազմող միջազգային համաձայնագիր է: Վերջինս սահմանում է, որ «Մարդկանց առևտուր է համարվում շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը բռնի ուժով կամ առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց՝ մարմնավաճառության մեջ ներքաշումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը, շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը համարվում է մարդկանց առևտուր, նույնիսկ այն դեպքում, եթե դրանք կապված չեն ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի կիրառման հետ»[2]:

Մարդկանց թրաֆիքինգը համընդհանուր-համաշխարհային և բազմակողմանի խնդիր է, որն ամբողջ աշխարհում ներառում է մոտ 50 միլիոն մարդու: Այն կարիք ունի պետության ջանքերի համակարգման և ուժեղացված միջազգային համագործակցության: Թրաֆիքինգի կամ

[1] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=199821

[2] Տե՛ս Protocol to Prevent, Suppress and Punish Trafficking in Persons Especially Women and Children, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-prevent-suppress-and-punish-trafficking-persons

շահագործման զոհերը հաճախ ամենախոցելին են՝ նրանք, ովքեր ունեն ֆինանսական կարիքներ, ապրում են ապագործառնական ընտանիքներում կամ ունեն մտավոր, հոգեկան (վարքագծային) կամ նյարդաբանական և զարգացման այլ խանգարումներ: Նման խոցելիությունները թրաֆիքերները շահագործում են՝ իրենց զոհերին վերահսկելու և շահույթ ստանալու նպատակով: Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման պատճառա-հետևանքային համալիրի, թրաֆիքինգի զոհերի հավաքագրման մեթոդների, շահագործման ձևերի, ինչպես նաև թրաֆիքինգի զոհի քրեաբանական բնութագրի և թրաֆիքինգ իրականացնողի անձի համապարփակ ուսումնասիրությունը թույլ կտա որոշել հանցագործության այս տեսակի կանխարգելման միջոցառումների կատարելագործման հիմնական ուղղությունները:

Մարդկանց թրաֆիքինգի շահագործման տեսակների կատարելագործման և դրա նոր ձևերի ի հայտ գալու պայմաններում հատկապես կարևորվում է մարդկանց թրաֆիքինգի քրեաբանական բնութագրի պատշաճ ուսումնասիրությունը՝ կանխարգելման միջոցառումների մշակման նպատակով:

Երբ մարդիկ զրկվում են ընտանիք պահելու հնարավորությունից ու չունեն այլ ելք, հաճախ դիմում են ցանկացած միջոցների՝ բարեկեցիկ երկրներ տեղափոխվելու համար: Ամենատարածված ճանապարհը անօրինական միգրացիան է, որը, սակայն, ինքնին չի հանդիսանում մարդկանց թրաֆիքինգ: Այնուամենայնիվ, ապօրինի միգրանտները խոցելի խմբերից են և հաճախ դառնում են շահագործման զոհ՝ հայտնվելով ստրկության կամ նման իրավիճակներում, քանի որ չեն կարողանում դիմել այն երկրի իշխանություններին, որտեղ գտնվում են անօրինական կարգավիճակով:

Թրաֆիքինգը կարող է ներառել նաև հարկադիր ամուսնություններ, ինչպես նաև օրգանների կամ հյուսվածքների հարկադիր հեռացում, այդ թվում՝ փոխնակ մայրության նպատակով[1]:

Երեխաները կազմում են թրաֆիքինգի զոհերի 15%-ը[2]: Երեխաների թրաֆիքինգը ներառում է նրանց հավաքագրումը, փոխադրումը, տեղափոխումը, թաքցնելը կամ ընդունումը շահագործման նպատակով: Երեխաների առևտրային սեռական շահագործումը կարող է արտահայտվել տարբեր

[1] Տե՛ս **Hedva Eyal.** “Reproductive Trafficking”, https://web.archive.org/web/20131203005235/http://www.councilforresponsiblegenetics.org/genewatch/GeneWatchPage.aspx?pageId=313, “Organ Removal” https://fightslaverynow.org/why-fight-there-are-27-million-reasons/otherformsoftrafficking/organ-removal/

[2] Տե՛ս https://home-affairs.ec.europa.eu/news/newly-released-data-show-increase-trafficking-human-beings-2024-02-28_en

ձևերով, այդ թվում՝ երեխային բռնի կերպով ներգրավելով պոռնկության մեջ կամ ստիպելով մասնակցել այլ սեռական գործողությունների կամ մանկական պոռնոգրաֆիային:

Երեխաների շահագործումը կարող է նաև ներառել հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ ստրկությանը նմանատիպ պրակտիկաներ, ծառայություն, օրգանների հեռացում, անօրինական միջազգային որդեգրում, վաղ ամուսնությունների նպատակով թրաֆիքինգ, երեխաների հավաքագրում որպես զինվորներ, մուրացկանության կամ սպորտային գործունեության (օրինակ՝ ֆուտբոլային թրաֆիքինգ) համար[1]:

Որոշ դեպքերում երեխաներին վաճառքում ներգրավում են հարկադիր աշխատանքի, սեռական թրաֆիքինգի կամ անօրինական որդեգրումների նպատակով:

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) տվյալներով՝ սեռական շահագործման նպատակով հարկադիր աշխատանքն ազդում է աշխարհի շուրջ 4.5 միլիոն մարդու վրա[2]: Զոհերի մեծ մասը հայտնվում է բռնի կամ չարաշահող պայմաններում, որոնցից փախչելը և ազատվելը դժվար և վտանգավոր է:

Օրգանների թրաֆիքինգը մարդկանց թրաֆիքինգի տարածված ձևերից մեկն է, որն արտահայտվում է տարբեր ձևերով: Որոշ դեպքերում զոհերին ստիպում են տրամադրել իրենց օրգանները, իսկ այլ դեպքերում նրանք համաձայնվում են վաճառել դրանք գումարի կամ նյութական արժեքների դիմաց, սակայն չեն ստանում խոստացված վճարումը կամ ստանում են այն մասնակիորեն: Գոյություն ունեն նաև դեպքեր, երբ զոհի օրգանը հեռացվում է առանց նրա գիտության, սովորաբար բուժման կամ վիրահատության պատրվակով, որը կարող է լինել իրական կամ կանխամտածված կազմակերպված[3]:

Այս հանցագործության հիմնական թիրախը երիկամների վաճառքն է, քանի որ շատ երկրներում փոխպատվաստման սպասող հիվանդների

[1] Տե՛ս **Mark Chaplin.** “Agents in the UEFA spotlight”, https://web.archive.org/web/20090430123308/ http://www.uefa.com/uefa/keytopics/kind%3D2048/newsid%3D462974.html, **The Guardian,** “British-born teenagers being trafficked for sexual exploitation within UK, police say” https://www. theguardian.com/society/2008/jul/03/childprotection.internationalcrime

[2] Տե՛ս **International Labour Standards on Forced Labour,** https://www.ilo.org/topics-and-sectors/forced-labour-modern-slavery-and-trafficking-persons

[3] Տե՛ս “Trafficking for Organ Trade”, https://web.archive.org/web/20141109112345/http://www.ungift.org/knowledgehub/en/about/trafficking-for-organ-trade.html

ցուցակները չափազանց երկար են, ինչը նպաստում է այս անօրինական շուկայի ընդլայնմանը[1]:

Փոխնակ (սուրոգատ) մայրությունը, որպես վերարտադրողական տեխնոլոգիա, բարդ իրավական, էթիկական և սոցիալական խնդիրներ է առաջացնում, հատկապես երբ այն կապվում է մարդկանց թրաֆիքինգի հետ: Միջազգային իրավունքում դեռևս չկա հստակ սահմանում, թե երբ սուրոգատ մայրությունը կարող է համարվել մարդկանց կամ երեխաների թրաֆիքինգի ձև, ինչի արդյունքում պետությունները և հետազոտողները գալիս են հակասական եզրակացությունների[2]:

Մարդկանց թրաֆիքինգի շրջանակներում կանանց հարկադրում են սուրոգատ մայրությանը սոցիալական խոցելիության, խաբեության, սպառնալիքների և ֆինանսական կախվածության միջոցով: Նրանք կարող են հայտնվել պայմանավորվածությունների մեջ, որտեղ ստիպված են լինում հանձնել երեխաներին՝ պայմանագրերով կամ ֆինանսական պարտավորություններով: Հատկապես վտանգավոր են այն դեպքերը, երբ կնոջը վճարվում է միայն երեխայի փոխանցումից հետո կամ երբ նրա ծնողական իրավունքները նախապես իրավաբանորեն վերացվում են[3]:

Օրենսդրական բացերի և միջազգային վերահսկողության թուլության հետևանքով փոխնակ մայրությունը հաճախ օգտագործվում է որպես մարդկանց թրաֆիքինգի միջոց՝ շահագործելով կանանց խոցելիությունը: Այս երևույթի կանխարգելման համար անհրաժեշտ է խստացնել միջազգային և ազգային օրենսդրությունը, ապահովել վերահսկողության մեխանիզմներ և պաշտպանել սուրոգատ մայրերի իրավունքները, որպեսզի նրանք չհայտնվեն հարկադրված կամ շահագործված վիճակում:

Թրաֆիքինգի զոհերը կարող են լինել ցանկացած սեռի, տարիքի և ազգության մարդիկ: Այնուամենայնիվ, սեռական թրաֆիքինգի նկատմամբ առավելապես խոցելին կանայք և աղջիկներն են:

Թրաֆիքինգի զոհերի խոցելիությունը պայմանավորված է տարբեր գործոններով, ինչպիսիք են՝

- ֆինանսական կարիքները,
- ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքները,

[1] Տե՛ս **Interpol,** “The Isuues of human trafficking”, https://www.interpol.int/Crimes/Human-trafficking-and-migrant-smuggling/The-issues

[2] Տե՛ս **Nishat Hyder-Rahman.** “Commercial Gestational Surrogacy: Unravelling the threads between reproductive tourism and child trafficking”, https://www.antitraffickingreview.org/index.php/ atrjournal/article/view/542/416

[3] Տե՛ս **Лапин И.В**. Торговля людьми и суррогатное материнство: Проблема разграничения:

- մտերմական գործընկերների կողմից շահագործումը,
- միգրանտների անօրինական կարգավիճակը,
- մտավոր, վարքագծային կամ նյարդաբանական խանգարումները,
- ծնողական խնամքից զրկված երեխաները,
- կրթության կամ լեզվական գիտելիքների սահմանափակությունը,
- ֆիզիկական հաշմանդամությունը[1]:

Մարդկանց թրաֆիքինգի զոհ դառնալու հավանականությունը մեծապես կախված է սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոններից: Հենց սոցիալ-տնտեսական ու քաղաքական անհամաչափ կարգավիճակն է, որ այս առումով խոցելի է դարձնում որոշ խմբերի: Աղքատությունը, կրթության պակասը, զինված հակամարտությունները, բնական աղետները, սեռային անհավասարությունը, սոցիալական խտրականությունը և թույլ իրավական համակարգերն են այն հիմնական գործոնները, որոնք նպաստում են թրաֆիքինգի զարգացմանն ու տարածմանը:

Աղքատությունը թրաֆիքինգի հիմնական խթանիչներից է: Տնտեսական դժվարությունները ստիպում են մարդկանց փնտրել ավելի լավ հնարավորություններ, ինչը նրանց դարձնում է խոցելի թրաֆիքերների խաբեությունների նկատմամբ: Աշխատանքի և եկամտի պակասը ստիպում է անհատներին ընդունել կասկածելի աշխատանքային առաջարկներ, որոնք հաճախ հանգեցնում են շահագործման: ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) 2024 թվականի զեկույցի համաձայն՝ ավելի քան 70% դեպքերում թրաֆիքինգի զոհերը սոցիալապես խոցելի խմբերից են, որոնց հիմնական խնդիրը աշխատանքի բացակայությունն է[2]: Այսպիսով, ինչպես վերը նշվեց, տնտեսական ճգնաժամերը, ինֆլյացիան, աշխատաշուկայի սահմանափակ հնարավորությունները և անբավարար եկամուտները ստիպում են մարդկանց փնտրել այլընտրանքային միջոցներ՝ երբեմն դիմելով կասկածելի առաջարկների, որոնք կարող են հանգեցնել թրաֆիքինգի:

[1] Տե՛ս U.S. Department of Health & Human Services, “Fact sheet: identifying victims of human trafficking”, https://www.acf.hhs.gov/archive/otip/fact-sheet/fact-sheet-identifying-victims-human-trafficking, “Who are the victims of human trafficking?” https://theexodusroad.com/human-trafficking-victims/, Human trafficking includes both sex trafficking and labor trafficking, https://humantrafficking.umich.edu/about-human-trafficking/who-are-the-victims/

[2] Տե՛ս **UNODC,** Global Report on Trafficking in Persons 2024 (United Nations publication, Sales no.: E.24.XI.11), https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/2024/GLOTIP2024BOOK.pdf

Կրթության ցածր մակարդակը ևս մեծացնում է թրաֆիքինգի զոհ դառնալու ռիսկը: Կրթության պակաս ունեցող անձինք հաճախ չունեն բավարար տեղեկացվածություն իրենց իրավունքների մասին և դժվարանում են տարբերակել օրինական և կեղծ աշխատանքային առաջարկները: Սա նրանց դարձնում է թիրախ թրաֆիքերների համար, ովքեր օգտվում են նրանց անտեղյակությունից: UNODC-ի զեկույցում նշվում է, որ թրաֆիքինգի զոհերի զգալի մասը՝ մոտ 40%, ունեն միայն տարրական կամ ավելի ցածր կրթություն: Կրթության պակասը սահմանափակում է ոչ միայն անձի մասնագիտական աճը, այլև՝ նրա իրավական պաշտպանվածության մակարդակը, ինչն էլ հեշտացնում է թրաֆիքերների կողմից նրանց շահագործումը:

Սեռային անհավասարությունն ու կանանց նկատմամբ խտրականությունը թրաֆիքինգի հիմնական գործոններից են: Ըստ UNODC-ի տվյալների՝ կանայք և աղջիկները կազմում են թրաֆիքինգի զոհերի 65%-ը: Նրանք ավելի հաճախ են ենթարկվում սեռական շահագործման, հարկադիր ամուսնությունների և տնային ստրկության: Որոշ երկրներում կանանց իրավական պաշտպանությունը թույլ է, ինչը նպաստում է թրաֆիքինգի տարածմանը:

Սոցիալական խտրականությունն ու խոցելի խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքը ևս թրաֆիքինգի պատճառներից է: Փոքրամասնությունները, էթնիկ խմբերը, հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ենթարկվում են թրաֆիքինգի, քանի որ նրանք տնտեսական կայունության և իրավական պաշտպանության ավելի քիչ հնարավորություններ ունեն:

Զոհերի հավաքագրման մեթոդները բազմազան են: Հաճախ զոհերը ճանաչում և վստահում են իրենց թրաֆիքերներին: Միջազգային միգրացիոն կազմակերպության տվյալներով՝ 41%-ը թրաֆիքինգի է ենթարկվում ընտանիքի անդամների կողմից, 14%-ը՝ մտերմական գործընկերների, իսկ 11%-ը՝ ընկերների կողմից: Այսպիսով, թրաֆիքինգի դեպքերի ծանրակշիռ մասում զոհերը ճանաչում են իրենց թրաֆիքերներին[1]:

Նրանք առաջարկում են այլ երկրներում կամ քաղաքներում բարձր վարձատրվող աշխատանքներ, կրթական հնարավորություններ կամ ավելի լավ կենսապայմաններ ունենալու հնարավորություններ: Սակայն, երբ զոհերը համաձայնվում և տեղափոխվում են, նրանք հայտնվում են շահագործման պայմաններում՝ առանց ազատության և իրավունքների: Աղքատությունը, կրթության պակասը և զինված հակամարտությունները կարող են առաջացնել

[1] Տե՛ս https://reliefweb.int/report/world/counter-trafficking-data-brief-family-members-are-involved-nearly-half-child

հուսահատություն և անօգնականության զգացում: Այս հոգեբանական վիճակները նվազեցնում են մարդկանց դիմադրողականությունը ռիսկային որոշումների նկատմամբ, ինչն էլ թրաֆիքերներին հնարավորություն է տալիս հեշտությամբ շահագործել նրանց:

Այս երևույթը չի սահմանափակվում որևէ տարածաշրջանով կամ սոցիալական խմբով. այն գլոբալ խնդիր է, որի դեմ պայքարը պահանջում է համապարփակ մոտեցում՝ ներառելով կանխարգելիչ միջոցառումներ, իրավական բարեփոխումներ և հանրային իրազեկվածության բարձրացում:

Հանցավոր խմբերի ներսում ներգրավված անձանց կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է տարբեր տարիքային խմբեր, սոցիալական և քրեական անցյալ ունեցող անձանց: Թույլ իրավական համակարգերը և կոռուպցիան ստեղծում են բարենպաստ միջավայր մարդկանց թրաֆիքինգի համար՝ նպաստելով դրա տարածմանը և խոչընդոտելով դրա արդյունավետ կանխարգելմանը: Շատ դեպքերում այս հանցագործություններում ներգրավված են լինում ոչ միայն կազմակերպված հանցավոր խմբերը, այլև պետական կառույցների ներկայացուցիչներ՝ մաքսային ծառայությունների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնատար անձինք, որոնք կոռուպցիոն սխեմաների միջոցով ապահովում են թրաֆիքինգի անխոչընդոտ իրականացումը: Արդյունքում ստեղծվում է փակ շրջան, որտեղ իրավական անորոշությունը և վերահսկողության բացակայությունը թույլ են տալիս շահագործել առավել խոցելի խմբերին՝ խաթարելով արդարադատության համակարգի արդյունավետությունը:

Ի տարբերություն զոհերի, ովքեր հաճախ սոցիալապես խոցելի խմբերից են և ունեն ցածր կրթական մակարդակ, հանցավոր խմբերի առաջնորդները, որպես կանոն, բավականին կրթված են: Նրանք ունեն բարձր իրավաբանական, ֆինանսական կամ տեխնիկական գիտելիքներ, ինչը հնարավորություն է տալիս հմտորեն կազմակերպել հանցավոր սխեմաները, խուսափել պատասխանատվությունից և մոլորեցնել ինչպես զոհերին, այնպես էլ իրավապահ մարմիններին: Այսպիսով, հանցավոր ցանցերի ներսում կրթական և սոցիալական խզվածությունը խորացնում է շահագործման մեխանիզմները՝ ուժեղացնելով հանցավոր խմբերի ազդեցությունը:

Հանցավոր խմբերում ներգրավված անձանց տարիքային բաշխվածությունը զգալիորեն տարբեր է՝ կախված հանցագործության բնույթից: Ըստ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի (UNODC) 2022 թվականի զեկույցի՝ կազմակերպված հանցավոր խմբերում ներգրավված անձանց մեծ մասը 26-40 տարեկան են և կազմում են ընդհանուրի 40-45%-ը:

18-25 տարեկանները կազմում են 30-35%, մինչդեռ 12-17 տարեկան անչափահասները՝ 10-15%: Անչափահասների ներգրավվածությունը հատկապես նկատվում է թմրանյութերի վաճառքի, ավազակային հարձակումների, փողերի լվացման և գողությունների դեպքերում: Մեքսիկայի, Կոլումբիայի, Բրազիլիայի և Աֆրիկյան որոշ երկրներում անչափահասները կազմում են նույնիսկ հանցավոր խմբերի 20%-ը, իսկ Եվրոպական երկրներում՝ Իտալիայում, Իսպանիայում և Ֆրանսիայում, այդ ցուցանիշը միջինը 12-15% է :

Հանցավոր խմբերի անդամները հիմնականում գալիս են սոցիալապես անապահով շերտերից, որտեղ գործազրկությունը, կրթական հնարավորությունների բացակայությունը և աղքատությունը առավել տարածված են: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հանցավոր խմբերի անդամների 45-50%-ն ունի միայն հիմնական կրթություն (մինչև 9-րդ դասարան), 30-35%-ն ավարտել է միջնակարգ դպրոց, 10-15%-ն ունի մասնագիտական կրթություն, իսկ բարձրագույն կրթությամբ անձինք կազմում են ընդամենը 5%-ը: Կրթական ցածր մակարդակ ունեցող անձինք առավել հակված են ներգրավվելու հանցավոր խմբերի մեջ, քանի որ նրանց համար այլընտրանքային ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են:

Չնայած կանայք համեմատաբար քիչ են ներգրավված հանցավոր խմբերում, նրանց դերը զգալի է որոշակի հանցագործությունների, հատկապես մարդկանց թրաֆիքինգի մեջ: Հաճախ հենց նախկինում թրաֆիքինգի զոհ դարձած կանայք են ներգրավվում այս հանցավոր գործունեության մեջ՝ երբեմն հարկադրանքով, երբեմն էլ՝ սոցիալական կամ ֆինանսական ծանր իրավիճակի պատճառով: Նրանք կարող են գործել որպես միջնորդներ, հավաքագրողներ կամ վերահսկողներ՝ օգտագործելով սեփական փորձը նոր զոհերին մոլորեցնելու և թրաֆիքինգի ցանց ներգրավելու համար: Այս երևույթը ձևավորում է թրաֆիքինգի փակ շղթա, որտեղ երբեմնի զոհերը վերածվում են շահագործման գործիքների՝ հաճախ առանց այլընտրանքի հնարավորություն ունենալու:

Մարդկանց թրաֆիքինգի նման քրեական ոլորտի դեմ պայքարի արդյունավետ միջոցների թվում կարելի է նշել ազգային քրեական օրենսդրության կատարելագործումը, որը նախատեսում է պատասխանատվություն մարդկանց թրաֆիքինգի համար: Սա ոչ միայն ապահովում է վերոնշյալ հանցագործության դեմ ուղղված ռեպրեսիվ միջոցների իրավական հիմքը, այլև ինքնուրույն կանխարգելիչ և դաստիարակչական ազդեցություն է ունենում հասարակության վրա:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում նախատեսված են հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

1. իրազեկման բարձրացում,
2. կրթական ծրագրերի իրականացում,
3. սոցիալական աջակցության ծրագրեր,
4. իրավական բարեփոխումներ և խստացված վերահսկողություն,
5. իրավապահ մարմինների կարողությունների զարգացում,
6. միջազգային համագործակցության ուժեղացում,
7. հետազոտությունների և տվյալների հավաքագրման իրականացում,
8. օժանդակության կենտրոնների ստեղծում և զարգացում:

Այս միջոցառումները նպատակ ունեն համապարփակ մոտեցմամբ կանխարգելել մարդկանց թրաֆիքինգը և ապահովել դրա դեմ արդյունավետ պայքար Հայաստանի Հանրապետությունում[1]:

Կարևոր է նշել նաև, որ թրաֆիքինգի կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը ոչ թե քրեական օրենսդրության առկայությունն է, այլ այդ հանցագործությունների համար անխուսափելի քրեական պատասխանատվությունը:

Միևնույն ժամանակ, չի կարելի չհամաձայնել Բ. Սվիրիդովի կարծիքի հետ, որ «միայն քրեական մեթոդներով մարդկանց թրաֆիքինգի շղթան ոչնչացնելու փորձը ուտոպիա է: Քանի որ այս տեսակի քրեական բիզնեսը չափազանց մեծ եկամուտ է ապահովում, քրեական օրենքի ընդհանուր և մասնավոր կանխարգելիչ մեխանիզմները բավարար չեն գործելու համար: Անհրաժեշտ է համալիր կանխարգելիչ միջոցառումների համակարգ՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում»[2]:

Օրենսդիրը պետք է գնա շատ ավելի հեռուն, քան Քրեական օրենսգրքում պարզապես համապատասխան հոդվածների կատարելագործումը: Թրաֆիքինգի զոհերին պետական պաշտպանություն ապահովող հատուկ օրենքները թույլ կտան համակարգային մոտեցում ցուցաբերել այս խնդրի իրավական լուծմանը՝ համատեղելով մեղավորներին պատժելու և տուժածների իրավունքները վերականգնելու խնդիրները:

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, https://www.irtek.am /views/act.aspx?aid=156465

[2] Տե՛ս **Свиридов Б.** Борьба с торговлей людьми и проституцией // Юридическая практика. № 18, 2006, էջ 23:

Իրավապահ մարմինները պետք է ակտիվորեն բացահայտեն մարդկանց թրաֆիքինգի զոհերին, քանի որ այս հանցագործության կատարման համար բնորոշ են բռնությունը (ֆիզիկական և հոգեբանական) և սպառնալիքները, ինչի հետևանքով զոհերը հաճախ հրաժարվում են իրենց նույնականացումից և չեն հայտարարում իրենց նկատմամբ կատարված հանցագործության մասին: Հանցագործները սովորաբար զոհերին ներշնչում են, որ նրանք պետք է վախենան ինչպես իրավապահ մարմիններից, այնպես էլ՝ ոչ կառավարական կազմակերպություններից: Եթե շահագործման ենթարկվողները անչափահասներ են, ապա թրաֆիքինգի կազմակերպիչները և մարմնավաճառության վայրերի ղեկավարները ստիպում են նրանց ներկայանալ որպես չափահասներ, ովքեր իբր իրենց ցանկությամբ են ներգրավվել սեռական շահագործման մեջ[1]:

Իրավապահ մարմինները պետք է ներդնեն մարդկանց թրաֆիքինգի զոհերի նույնականացման հատուկ ընթացակարգ, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքներ իրականացնեն ռիսկային խմբերում, ներառյալ՝ ներգաղթի, մարմնավաճառության և մուրացկանության մասին օրենքները խախտած անձանց, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության խախտման մեջ ներգրավված մարդկանց շրջանում: Չի կարելի սպասել, որ թրաֆիքինգի զոհերը ինքնուրույն կհայտնվեն, նրանց պետք է հայտնաբերել օպերատիվ-հետախուզական միջոցների կիրառմամբ:

Հաջորդ կարևոր քայլը իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստումն է: Անհրաժեշտ է բարձրացնել իրավապահների որակավորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ այս հանցագործությունն արագ է փոփոխվում և դառնում ավելի բարդ: Բացի այդ, մարդկանց թրաֆիքինգի դինամիկ բնույթը պահանջում է իրավապահների հմտությունների շարունակական զարգացում: Այս խնդրի արդյունավետ լուծման կարևոր պայման է նաև միջազգային համագործակցությունը: ՌԴ ներքին գործերի մարմինները պետք է սերտորեն համագործակցեն այլ երկրների իրավապահ մարմինների հետ՝ միջազգային մակարդակով պայքար կազմակերպելու համար:

Իրավապահ մարմինները, դատախազները և դատավորները պետք է հասկանան մարդկանց թրաֆիքինգի գլոբալ բնույթը և ազգային օրենս-

[1] Տե՛ս **Гетман И.Б.**. Превентивные меры борьбы с торговлей людьми на современном этапе // Омская академия МВД РФ.

դրության շրջանակներում գործեն այնպես, որ դա համահունչ լինի միջազգային պատժիչ միջոցառումների համակարգին:

Մարդկանց թրաֆիքինգի և երեխաների, պատանիների ու երիտասարդների սեռական շահագործման վտանգի մասին տեղեկատվությունը պետք է տարածվի հնարավորինս լայն շրջանակներում: Առանձնահատուկ ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի այդ տեղեկատվությունը հասնի սոցիալապես անապահով խավերին, նրանց երեխաներին, պատանիներին ու երիտասարդներին, ովքեր դուրս են մնացել կրթական համակարգից:

Կարծում ենք, որ զանգվածային լրատվամիջոցներում իրազեկման քարոզարշավները կլինեին երկարաժամկետ և կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կօգնեին հանրությանը տեղեկացնել մարդկանց թրաֆիքինգի մասին: Հանցագործները հաճախ օգտվում են հասարակության տեղեկացվածության պակասից՝ իրենց զոհերին գրավելով հեշտ վաստակի և բարեկեցիկ կյանքի խոստումներով: Քանի որ մարդկանց թրաֆիքինգի զոհերը հաճախ թակարդն ընկնում են խաբեության միջոցով, ընդհանուր իրազեկվածության բարձրացումը կօգնի նրանց հասկանալ, որ իրենց դեմ հանցագործություն է կատարվում: Արդյունքում, նրանք ոչ միայն կկարողանան խուսափել նվաստացնող փորձառությունից, այլև կկարողանան աջակցել իրավապահ մարմիններին՝ այս հանցագործությունների դեմ պայքարում:

Համոզված ենք, որ վերը նշված կանխարգելիչ միջոցառումները կլինեն մարդկանց թրաֆիքինգի կանխման ամենակարևոր և արդյունավետ միջոցներից, քանի որ, ճիշտ այնպես, ինչպես պատվաստանյութերը կանխում են հիվանդությունները, այս կանխարգելիչ քայլերը կարող են արմատից վերացնել այս խնդրի պատճառները: Մարդկանց թրաֆիքինգի խնդիրը հաղթահարելի է, սակայն դրա դեմ պայքարի համար անհրաժեշտ են հսկայական ջանքեր:

Եզրակացություն

Մարդկանց թրաֆիքինգը շարունակում է մնալ միջազգային կազմակերպված հանցագործության ամենաշահութաբեր և դաժան դրսևորումներից մեկը՝ ուղղակիորեն խաթարելով հազարավոր մարդկանց կյանքեր: Վիճակագրական տվյալների և միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ թրաֆիքինգի հիմնական զոհերը սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչներն են, որոնց թիրախավորումը պայմանավորված է նրանց տնտեսական, իրավական և սոցիալական անապահովությամբ: Խոցելիության այս գործոնները հմտորեն օգտագործվում են հանցավոր ցանցերի կողմից՝

հարկադիր աշխատանքի, սեռական ստրկության և շահագործման այլ ձևերով շահույթ ստանալու նպատակով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավական բացերը, կոռուպցիան, թույլ վերահսկողությունը և զոհերի վաղ հայտնաբերման բացակայությունը զգալիորեն նպաստում են թրաֆիքինգի տարածմանը, մինչդեռ պատժամիջոցների և կանխարգելման միջոցառումների կիրառման մակարդակը շարունակում է մնալ անբավարար: Ուստի անհրաժեշտ է ոչ միայն խստացնել օրենսդրական պատասխանատվությունը և ուժեղացնել իրավապահ մարմինների արձագանքը, այլև ներդնել արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր՝ բարձրացնելով հանրային իրազեկվածությունը, ապահովելով սոցիալական պաշտպանություն խոցելի խմբերի համար և խորացնելով միջազգային համագործակցությունը հանցավոր ցանցերի դեմ պայքարում:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ սույն աշխատանքում գիտական նորույթ է առաջարկվում՝ թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ **խոցելի խմբերի ռիսկերի գնահատման և վաղ հայտնաբերման միասնական թվային հարթակի ստեղծումը**, որը կօգտագործի արհեստական բանականության հնարավորությունները: Հարթակի նպատակն է բարելավել տեղեկատվության փոխանակումը, կանխատեսել ռիսկերը և արագ նույնականացնել պոտենցիալ զոհերին՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO, 2022) և Պալերմոյի արձանագրության (United Nations, 2000) դրույթներին համապատասխան:

Նման համալիր և նորարարական մոտեցումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել թրաֆիքինգի կանխարգելման արդյունավետությունը և ապահովել խոցելի անձանց պաշտպանությունը՝ ամրապնդելով իրավական և սոցիալական մեխանիզմները թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականություն ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: ՀՀՊՏ 01.07.2022,
URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=204754

2. Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը: ՀՀՊՏ 30.06.2015,

URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=163101

3. Protocol to Prevent, Suppress and Punish Trafficking in Persons Especially Women and Children, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime/ adopted 15 November 2000, URL:https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol prevent- suppress-and-punish-trafficking-persons

4. **Hedva Eyal**. "Reproductive Trafficking", URL:https://web.archive.org/web/20131203005235/http://www.councilforresponsiblegenetics.org/genewatch/GeneWatchPage.aspx?pageId=313

5. "Organ Removal", URL: https://fightslaverynow.org/why-fight-there-are-27-million-reasons/otherformsoftrafficking/organ-removal/

6. **Mark Chaplin**. "Agents in the UEFA spotlight" URL:https://web.archive.org/web/20090430123308/http://www.uefa.com/uefa/keytopics/kind%3D2048/newsid%3D462974.html

7. The Guardian, "British-born teenagers being trafficked for sexual exploitation within UK, police say" URL:https://www.theguardian.com/society/2008/jul/03/childprotection.internationalcrime

8. International Labour Standards on Forced Labour URL: https://www.ilo.org/topics-and-sectors/forced-labour-modern-slavery-and-trafficking-persons

9. "Trafficking for Organ Trade" URL:https://web.archive.org/web/20141109112345/http://www.ungift.org/knowledgehub/en/about/trafficking-for-organ-trade.html

10. Interpol, "The Issues of human trafficking" URL:https://www.interpol.int/Crimes/Human-trafficking-and-migrant-smuggling/The-issues

11. **Nishat Hyder-Rahman**. "Commercial Gestational Surrogacy: Unravelling the threads between reproductive tourism and child trafficking" DOI: 10.14197/atr.201221168 URL:https://www.antitraffickingreview.org/index.php/atrjournal/article/view/542/416

12. **Лапин И.В.** Торговля людьми и суррогатное материнство: Проблема разграничения.

13. U.S. Department of Health & Human Services, "Fact sheet: identifying victims of human trafficking", URL:https://www.acf.hhs.gov/archive/otip/fact-sheet/fact-sheet-identifying-victims-human-trafficking

14. "Who are the victims of human trafficking?" URL: https://theexodusroad.com/human-trafficking-victims/

15. Human trafficking includes both sex trafficking and labor trafficking. URL:https://humantrafficking.umich.edu/about-human-trafficking/who-are-the-victims/

16. UNODC, Global Report on Trafficking in Persons 2024 (United Nations publication, Sales no.: E.24.XI.11), URL: https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/2024/GLOTIP2024_BOOK.pdf

17. https://reliefweb.int/report/world/counter-trafficking-data-brief-family-members-are-involved-nearly-half-child

18. https://home-affairs.ec.europa.eu/news/newly-released-data-show-increase-trafficking-human-beings-2024-02-28_en

19. Свиридов Б. Борьба с торговлей людьми и проституцией // Юридическая практика. № 18, 2006.

20. Гетман И.Б. Превентивные меры борьбы с торговлей людьми на современном этапе // Омская академия МВД РФ.

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРЕДУПРЕЖДЕНИЕ ТРАФФИКИНГА

Аннотация

Траффикинг или эксплуатация людей считается проявлением современного рабства, предполагающим эксплуатацию уязвимых лиц. Хотя исторически рабство воспринималось как открытый правовой статус, сегодня оно выражается в принудительном труде, сексуальной эксплуатации и других формах порабощения.

Причины торговли людьми многообразны: в одних случаях она обусловлена социально-экономической необеспеченностью, в других – слабостью правовых систем и деятельностью международных преступных сетей и т. д. Борьба с этим явлением требует комплексного подхода, включающего профилактические меры, законодательные реформы и сотрудничество правоохранительных органов.

В данной статье рассматривается криминологическая характеристика жертв траффикинга, отмечаются их социальные, возрастные, гендерные и психологические особенности, а также механизмы их выбора преступниками.

Кроме того, проведён анализ статистических данных о торговле людьми, выявлены тенденции её распространения, а также предложены правовые, социальные и правоохранительные механизмы её предотвращения.

Ключевые слова: торговля людьми, современное рабство, принудительный труд, сексуальная эксплуатация, профилирование жертв, преступные сети, антитраффиковое законодательство.

CRIMINOLOGICAL CHARACTERISTICS AND PREVENTION OF HUMAN TRAFFICKING

Annotation

Human trafficking is considered a manifestation of modern slavery, involving the exploitation of vulnerable individuals. While historically, slavery was recognized as an explicit legal status, today it manifests in forms such as forced labor, sexual exploitation, and other types of servitude.

The causes of human trafficking are diverse: in some cases, they stem from socio-economic insecurity, while in others, they are linked to weak legal systems and the operations of international criminal networks. Combating this phenomenon requires a comprehensive approach, including preventive measures, legislative reforms, and cooperation among law enforcement agencies.

This article examines the criminological profile of human trafficking victims, highlighting their social, age, gender, and psychological characteristics, as well as the mechanisms used by criminals to select their victims.

Additionally, the article analyzes statistical data on human trafficking, identifies trends in its prevalence, and proposes legal, social, and law enforcement mechanisms for its prevention.

Keywords: human trafficking, modern slavery, forced labor, sexual exploitation, victim profiling, criminal networks, anti-trafficking legislation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.09.2025 թ., տրվել է գրախոսության 10.09.2025 թ., ընդունվել է տպագրության 25.09.2025 թ.: